

կէ 23 տարի առաջ եղաւ նախագահ Աւստրիոյ Ռայխսարաթի (Պատգամաւորական Ժողովի), այսինքն թագաւորէն յետոյ առաջին անձը նախկին Հարսբուրգեան միապետութեան մէջ:

Հայեր՝ բարձրագոյն պաշտօններով եղած են, ինչպէս յայտնի է, շարք մը ուրիշ երկիրներու մէջ — Նուբար փաշա (վարչապետ) Եգիպտոսում, Եփրեմ՝ Պարսկաստանում, Լուկաչ եւ Դանիէլ՝ Ունգարիայում, Արթին փաշա, Նորատունկեան եւ այլք՝ Թիւրքիայում, նախարարներ՝ անգամ Ռումանիայում եւ այլն:

Կը մասնաւորեմ խօսքս մեծ պետութիւններու մասին. եւ հոն դոյզ մը բարձրաստիճան ցեղակիցներ ունեցած ենք — Լօրիս եւ Դաւիթ:

Եւ դարձեալ ուշագրաւ նմանութեամբ մը՝ երկու յիշեալ զոյգերու մէջ — հրէական եւ հայկական — դէմքերը լիակատար հակոտնեաներ են: Դիպրայէլի՝ հակոտնեայ մըն է Լուցցատտի եւ Լօրիսը՝ հակոտնեայ մը Դաւիթի:

Դաւիթը, ծնուած լեհական Գալիցիայի մէջ, զարարողցի հայու տիպ մըն է (դեռ ողջ է), Բուլղոզ շան կերպարանքով, մեծ հարստութեան եւ արտակարգ կամքի ու կորովի տէր, — մարդ մը, սակայն, որ ազատ Եւրոպայի մէջ ապրելով, հակառակ Լօրիսի, բընաւ չ'ազդուիր ժամանակի ազատական հոսանքներէն, պահպանողական է մինչեւ ուղ ու ծուծ, որպէս Ֆաշիստ պարագլուխ մը, կ'արհամարհէ Սորհրդարան ու Ժողովրդային Երաւունքներ... Եւ երբ զինքը նախագահ ըրին աւստրիական Սորհրդարանի — հազուադիւտ պատիւ մը — չէր հանդուրժեր ռեէօ օպպօզիցիա (ընդդիմադիր, ձախակողմեան տարրեր) եւ այդ օպպօզիցիան լռեցնելու համար օրին մէկը ռատիկաններ մտցուց Սորհրդարանի սըրահին մէջ, նորագոյն Եւրոպայի, անգամ Գերմանիոյ խորհրդարանային տարեգրութեան մէջ չէր եղած ալգպիսի բան մը... Դէպքը ասպին փոթորիկ հանեց. ընկերվարական երեսփոխանները կը պոռային Դաւիթի երեսին. դո՛ւրս, կորի՛ր հայկական շուն... Armenischer Hund!... (Նախատինքը չէր ուղղուած հայ ցեղի հասցէին). իսկ Աբրահամովիչ անվրդով կը պատասխանէր. «այս ի՞նչ

ապուշութիւն է, ամօ՞թ բան է միթէ հայ ծագում ունենալը»...

Բայց Դաւիթ երգը երգուած էր արդէն. շուտով ստիպուած եղաւ հրաժարական տալ:

Լեհ բարեկամ մը վերջերս հետեւեալ անեկդոտանման իրողութիւնը կը պատմէր ինձի.

— Երբ ծանուցուեցաւ, թէ Ռայխսարաթի նախագահ ընտրուեր է Դաւիթ Աբրահամովիչ, Աւստրիոյ միլիոնաւոր հրէութիւնը կը ցնծար... Կը կարծէին, թէ Դաւիթ հրէայ մըն է... Անունն ալ, ազգանունն ալ հրէական: Զգայացուց անակնկալ մը Աւստրիոյ մէջ, որ այն ատեն (եւ այսօր ալ գրեթէ նոյնն է) ամենէն հակասեմիտ երկիրն էր... Եւ յանկարծ հրէայ մը — անոր բարձրագոյն ազգային հաստատութեան գլուխ... Chocking! Գերման զանգուածներն եւս յուզուած էին: Անոնց ականջին եւս խորթ ու անախորժ կը հնչէին «Դաւիթ» եւ «Աբրահամովիչ» անունները: Շուտով սակայն կ'իմացուի, որ Դաւիթ լեհահայ մըն է... Գերմանացիք կը հանգստանան, իսկ հրէաները դառն յուսախաբութիւն մը կ'ունենան:

Ուրիշ լեհ գործիչ մը, Վիթօլդ Եօզիօ (Վրօնսկի), որ մօտ քառորդ դարէ ի վեր Հ. Յ. Դաշնակցութեան դործակիցներէն էր ընկերվարական Ինտերնացիոնալի եւ համառուսական Ժողովներու մէջ (վերջերս մեռաւ Վարչավարչում), կատակով կ'ըսէր մեզի, դիտնալով որ քարոզչական պտոյտ մ'ըրեր էի Աւստրիոյ լեհահայ զաղութներու մէջ.

— «Եկէ՛ք հայացուցէք մեր Աբրահամովիչները, մեզի պէտք չ'են անոնք, սիրով կը վերադարձնենք ձեզի»...

V

ԴԻԶՐԱՅԷԼԻ ԵՒ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ

Ժամանակակիցներ են երկու դէմքերը: Դրեթէ միաժամանակ — մէկը՝ Անգլիոյ Պրեմիեր, միւսը Ռուսիոյ վարչապետ: Պատմութեան համար առեղծուածի պէս բան մըն է, թէ ի՞նչպէս ասիկէ կէս դար առաջ թշուառ, հալածական, ոտնահարուած հրէութեան մէկ